The Lemkin Institute has identified a number of trends regarding the misleading, and therefore harmful, language used by media outlets regarding the conflict. The term "clash(es)" has been consistently used by the media since the 2020 war over Nagorno-Karabakh. The term itself cannot offer precise clarity about the details of the conflict, and it is often used as a breaking news "buzzword." Its frequent use suggests that the conflict is playing itself out around incomprehensible issues that resist factual confirmation. For example, an Al Jazeera article from September 15, titled "Death toll in Azerbaijan-Armenia border clashes rises," has the following subtitle: "United Nations welcomes ceasefire after 176 soldiers killed in two days of fighting, which each side blames on the other." While it is true that each side blames the other, only one side invaded a sovereign state without provocation. On September 14, CNN ran the story "Ceasefire is short-lived as Azerbaijan and Armenia resume attacks," which suggests that the decision to engage militarily was mutual, ignoring the spontaneity of Azerbaijan's attack on the Republic of Armenia.

Continued on page 4

Palliative Care Clinic opens at Armenia's National Center of Oncology



Prime Minister Nikol Pashinyan has visited on Saturday V.A. Fanarjyan National Center of Oncology (NCO) under the Ministry of Health of the Republic of Armenia and attended the event dedicated to the opening of the new Palliative Care Clinic and the 75th anniversary of the establishment of the NCO. Minister of Health Anahit Avanesyan, Deputy Mayors of Yerevan Tigran Avinyan and Gevorg Simonyan, MPs Arsen Torosyan and Narek Zejnalyan, directors of medical centers of Armenia, partners from the Russian Federation, France, Georgia, and other officials participated in the event.

PM Pashinyan and other guests toured the newly opened clinic, familiarizing with the work done and the created conditions. The relevant offi-

cial presented the directions of activities and programs of the clinic to the Head of the Government. It was reported that the Palliative Care Clinic, equipped with modern medical equipment, meets the international standards of hospitals and is ready to provide quality and accessible medical services.


It was noted that for modernizing the main building, large-scale construction and technical re-equipment works were carried out, new services will be provided, some of which are exclusive for Armenia. The Palliative Care Clinic will have 26 wards with 30 beds, a separate social-psychological service team that will work not only with the patients, but also with their relatives.

“A House in the Homeland: Armenian Pilgrimages to Places of Ancestral Memory” by Dr. Carel Bertram

FRESNO — Dr. Carel Bertram will present an in-person lecture entitled “A House in the Homeland: Armenian Pilgrimages to Places of Ancestral Memory” at 7:00PM on Thursday, October 20, 2022, in the University Business Center, A. Peters Auditorium, on the Fresno State campus. The presentation is supported by the Clara Bousian Bedrosian Memorial Fund.

Following the Armenian Genocide of 1915, the United States became an important refuge for genocide survivors. For these survivors, even the idea of returning to a homeland emptied of Armenians and filled with memories of death and terror was unthinkable, and few ever saw their beloved homes again. But slowly and much later, the survivors’ children, and then their grandchildren began to make forays to Turkey in search of their families’ lost houses in the towns/villages that they had heard so much about. Although they had never been there before, they bristled at the term “tourists,” as their profound attachments made them feel that they were hardly just curious visitors, but were, in a sense, returning home. Instead, many called their journeys pilgrimages, and referred to themselves as pilgrims. Between 2007 and 2015, Carel Bertram traveled with over a hundred such pilgrims, and was in contact with many more, resulting in her book *A House in the Homeland, Armenian Pilgrimages to Places of Ancestral Memory* (Stanford University Press, 2022.) In this talk, Bertram brings these pilgrimages and their impact to life, by telling some of their stories.

Dr. Carel Bertram is Professor Emerita in Middle East and Islamic Studies, Department of Humanities, San Francisco State University. Her




M.A. in Near Eastern Studies was taken at the University of California at Berkeley, her Ph.D. in Islamic Art History at UCLA. Trained in the visual culture of the Ottoman and post-Ottoman era, she uses art, architecture, cities, literature, ethnography and oral histories to study how we use space and place to represent ourselves in the world; and also how it is that the memory of places creates a particular historical consciousness, especially when remembering a home lost to time or exile.

The lecture is free and open to the public. Parking is available in Fresno State Lots P6 and P5, near the University Business Center, located at 5245 N. Backer Ave., Fresno State. A free parking code can be obtained by contacting the Armenian Studies Program.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, <https://cah.fresnostate.edu/armenianstudies/index.html>.

The Life Of Mashtots’ by His Disciple Koriwn

Translated from the Classical Armenian with Introduction and Commentary by Abraham Terian



The *Life of Mashtots* (d. 440 ce) is mostly praise for the inventor of the Armenian alphabet—the only inventor of an ancient alphabet known by name—and progenitor of Armenian literacy that began with the translation of the Bible. Written three years after his death, by an early disciple named Koriwn, it narrates the master’s endeavors in search for letters, the establishment of schools, and the ensuing literary activity that yielded countless translations of religious texts known in the Early Church. As an encomium from Late Antiquity, the *LIFE* exhibits all the literary features of the genre to which it belongs, delineated through rhetorical analysis by Terian, who comments on the entire document almost phrase by phrase.

Translated from the latest edition of the text (2003), provided here with the English translation facing, the *LIFE* is quite gripping for reasons beyond its extraordinary narrative parading historical characters playing collaborative roles. Foremost among them are the Patriarch of the Armenian Church, Catholicos Sahak (d. 439), and the Arsacid King of Armenia, Vr?amshapuh (r. 401–417). The Roman Emperor of the East, Theodosius II (r.

408–450), also has a role. Koriwn is an eminently inspiring rhetorical writer, unconcerned about historical details considered to have been familiar to his immediate audience; still, historical elements abound. He is foremost among authors known to write in the newly invented script, and the marked influence of the *LIFE* is discernible in subsequent Armenian writings of the fifth century, dubbed ‘The Golden Era’.

ABRAHAM TERIAN is Professor Emeritus of Armenian Theology and Patristics at St. Nersess Armenian Seminary, New York, where he also served as Academic Dean for ten years. He was Professor of Intertestamental and Early Christian Literatures at Andrews University for twenty years. More recently, he was Robert F. and Margaret S. Goheen Fellow in Classical Philosophy at the National Humanities Center, where this work was completed. Recipient of the Fulbright Distinguished Chair in the Humanities award and academician of the National Academy of Sciences of Armenia and of the Ambrosian Academy of Milan, he has extensive publications in Hellenistic, early Christian, and medieval studies.

Lemkin Institute Accuses Western Media

Continued from page 3

Other short-cut descriptors like “tensions” and “flare up” suggest equal responsibility for the violence and downplay the severity of an unprovoked attack by a strong adversary with an even stronger regional ally. (See: Times of Israel, 9/14/2022, “Death toll reaches 99 in fresh Armenia-Azerbaijan flareup”.) These words, along with balanced-sounding language like “armed conflict” and “hostilities,” incorrectly frames the actions of the aggressor and are used to imply equal power and assume equal responsibility for the attack. Similarly, several high-ranking diplomats called for “both sides [to] show restraint,” a term which is unfortunately most often invoked after a targeted nation or people responds in self-defense. In the case of the attack on September 13, US Secretary of State Antony Blinken issued a statement with this exact call, speaking up only after Armenia’s act of self-defense. As has been seen in so many other instances of genocide, the fallacy of bothsidesism serves only to

support the aggressor party and mask its crimes.

Other reporting describes Azerbaijan’s war of aggression against the Republic of Armenia’s sovereign borders as “linked to” the conflict over the disputed Nagorno-Karabakh territory, which frames Azerbaijani aggression according to the justifications of the Azeri government. Azerbaijani aggression towards the Republic of Armenia should be analyzed in terms of its own government’s internal rhetoric, which frequently claims that all of present-day Armenia is Azeri land. On this note, there is a concerning number of articles quoting official statements made by the Turkish and Azeri governments that are not fully vetted for potential propaganda and are instead accepted at face value. It is not made clear to readers that Azeri assaults on the Republics of Artsakh and on Armenia are the consequence of an ideology of expansionism shared with and stoked by Turkey, an ideology that the presidents of both countries frequently speak about in public.

Several articles also use childish

words that are wholly inappropriate for an investigation into a serious decades-long war characterized by genocidal atrocities committed Azerbaijan and blame Armenia for invoking its own invasion (see, for example, “Armenia sides with Russia in snub to Azerbaijan over border fracas by Newsweek, 9/13/2022). A September 13 article published in Politico (“No good outcomes in latest Armenia-Azerbaijan fighting”) referred to the “decadeslong spat over Nagorno-Karabakh” (our emphasis).

Finally, the Lemkin Institute is concerned by the number of Western media articles which do little to provide background information on Azerbaijan’s one-sided decision to violate the ceasefire agreement that has been in place since the end of the 44-day war in November of 2020. Even ostensibly well-meaning explanation articles ignore the high level of Armenophobic hate speech by Azeri officials, the documented atrocities committed by Azeri soldiers in the 2020 war against Armenian prisoners of war and civilians, the string of connected hate crimes against Armenians in the diaspora, the history of the 1915-1923 genocide against Armenians, Greeks, and Assyrians commit-

ted by the Ottoman Empire (which took the lives of at least 1.2 million Armenians), the well-funded and long-time denial of that genocide by Turkey and Azerbaijan, the internal human rights abuses committed by the government of Azerbaijan (which often uses hate speech against Armenians and war with Armenia as a distraction), and the series of broken ceasefire attacks such as this one that have been consistently committed by Azerbaijan with the military and diplomatic support of Turkey.

The Lemkin Institute calls upon Western media outlets to clarify their language and avoid the false neutrality of “balanced reporting” that simply reproduces the propaganda of the aggressor and fuels genocidal actions and rhetoric. The Western media needs to tell the truth and call the war on Armenia what it is: an aggressive war with clearly demonstrated genocidal intent against Armenians. The governments of Turkey and Azerbaijan have been open about their animosity towards the nation, people, and culture of Armenia. If left unchecked, the world will be faced with addressing yet another devastating genocide and the press will have been complicit once again.

Փայլան.

«Եթէ Մահն Անգամ Յոգնած Է՛ժամանակն Է Խաղաղութեան Երգեր Երգելու»



Ժողովուրդներու ժողովրդավար կուսակցութեան Տիգրանակերտի պատգամաւոր կարօ Փայլան այսօր Թուրքիոյ խորհրդարանին մէջ սարքեց մամլոյ ասուլիս մը՝ փրակի մէջ կայանալիք էրտողանփաշինեան հանդիպման ընդառաջ:

Փայլան նշեց, թէ այսօր փրակի մէջ պատմական հանդիպում մը պիտի կայանայ՝ պիտի հանդիպին նախագահ էրտողան եւ վարչապետ փաշինեան: «Յուսամ այս պատմական հանդիպումը նպաստէ տարածաշրջանային խաղաղութեան: Դարերէ ի վեր միասնաբար ապրած հայեր, ատրպէյճանցիներ եւ Թուրքիոյ ժողովուրդները դժբախտաբար վերջին հարիւրամեակին հակամարտութիւններու հետեւանքով հեռացան իրարմէ: Մինչեւ հարիւր տարի առաջ Անատոլիոյ իւրաքանչիւր քաղաքի մէջ հայեր կը բնակէին, իսկ այսօր ափ մը մնացած ենք: Դեռ կանք, եւ որպէս Թուրքիոյ հայեր դեռ խաղաղութիւն կը պահանջենք: 35 տարի առաջ միասնաբար կ'ապրէին ատրպէյճանցիներն ու հայերը: Սովետական Միութեան կազմալուծմամբ, նոյն օրն իսկ ստեղծուած այս երկու երկիրները՝ Հայաստան եւ Ատրպէյճան, յայտնուեցան պատերազմի մէջ եւ երկու ժողովուրդներն ալ 35 տարիէ ի վեր պատերազմելով կը պարտուին: Ա՛լ պատերազմին վերջ տալու պահն է: Եւ այս ուղղութեամբ Թուրքիա պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ: Իմ երկրի նախագահը՝ պր. էրտողան պատասխանատուութիւն պէտք է ստանձնէ: Ազգային ժողովը տարածաշրջանային խաղաղութեան համար պատասխանատուութիւն պէտք է ստանձնէ: Այս առումով բոլորը պատասխանատուութիւն ստանձնելու կը հրաւիրեմ», յայտնեց հայազգի պատգամաւորը:

Սարգսեան հանդիպեցան թէ՛ Երեւանի, թէ՛ Պուրսայի մէջ: Այդ շրջանին արձանագրութիւններ ստորագրուեցան, սակայն երկու կողմի ազգայնականները արգելք եղան խաղաղութեան հաստատման: Սա երկրորդ առիթն էր, որ փախցուցինք: Խաղաղութեան բացակայութեան պատճառով, 2020-ին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ 44-օրեայ պատերազմ մը սանձա-

զերծուեցաւ: Հայաստանի ու ատրպէյճանցի հազարաւոր երիտասարդներ մահացան: Առանց խտրականութեան կը խոնարհիմ բոլորի յիշատակին առջեւ եւ կը ցաւակցիմ իրենց ընտանիքներուն: Քանի որ քաղաքական գործիչները չկրցան հաշտուիլ, ցաւը ժողովուրդները ապրեցան: Մինչդեռ ատրպէյճանցիներն ու հայերը մինչեւ 35 տարի առաջ միասնաբար կ'ապրէին, եղբայրաբար, հարեւան զիւղերու մէջ, առուտուր կ'ընէին իրարու հետ: Ստեղծուեցաւ այնպիսի ընկալում մը, թէ այս ժողովուրդները պատմական թշնամիներ են: Բայց, ինչպէս Եաշար Քեմալ կ'ըսէր, եթէ մահն անգամ յոգնած է՝ ժամանակն է խաղաղութեան երգեր երգելու»:

Ըստ Փայլանի, հակառակ այլ երկիրներու ջանքերուն, Թուրքիա խաղաղութեան համար պատասխանատուութիւն չի ստանձնեց, այլ կողմնակցութիւն ընելով կը կանգնի Ատրպէյճանի կողքը: «Ատրպէյճանը ջան կը կոչէ Թուրքիա: Բայց, պարոն էրտողան, պէտք է գիտնաք, որ այս արտայայտութիւնը ամենաշատ Հայաստանի մէջ կը գործածուի: Տարածաշրջանա-

յին խաղաղութիւնը կը հաստատենք այն ժամանակ, երբ Ջան Ատրպէյճան ըսելու պէս ըսենք նաեւ՝ Ջան Հայաստան: Նոյնպէս եւ ատրպէյճանցիները հայերը Ջան պիտի կոչեն եւ ընդհակառակը: Տարածաշրջանային խաղաղութեան բարիքները բոլորս պիտի վայելենք: Հիմա ահա՛ առիթ մը եւս կայ խաղաղութեան»:

«Հայեր կ'ըսեն, թէ Ղարաբաղը իրենցն է, ատրպէյճանցիներ ալ կ'ըսեն թէ իրենցն է: Ո՛չ, Ղարաբաղ կը պատկանի Ղարաբաղի ժողովուրդներուն, միասնաբար ապրիլ երազող ղարաբաղցի հայերու ու ատրպէյճանցիներու: Սակայն ղարաբաղցի հայեր մտահոգ են իրենց ապագայով եւ պէտք է ապահովել անոնց անվտանգութիւնը», ընդգծեց Փայլան:

«Կոչ կ'ուղղեմ, կը պահանջեմ սահմաններու անյապաղ բացումը: Հայաստան-Թուրքիա սահմանը պէտք է բացուի: Քաղաքական գործիչները առանձինն չեն կրնար կերտել խաղաղութիւնը: Խաղաղութիւնը կը կայանայ երբ իրարմէ

Շար.ը էջ 14



Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը
Կը Ներկայացնէ
«Կոչ Զարթօնքի»

Վաւերագրական ժապաւենի ցուցադրութիւն. 2,000 մղոն ուղեւորութիւն
Արեւմտեան Հայաստանի մէջ:
Կիրակի, 16 Հոկտեմբեր, 2022-ին կէսօրէ ետք ժամը 5:00-ին
ՀԿԲՄ Կեդրոնէն ներս:

Մուտքը Ազատ Հիւրասիրութիւն



Nor Serount Cultural Association
Invites you to Screening of
"A Call for Awakening"

Documentary movie. A 2,000-mile journey of Western Armenian towns.
Sunday October 16, 2022, at 5:00 pm
AEBU center: 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104
Seating is limited. Please RSVP at (818) 590-9293

Փայլան յիշեցուց, որ 1993-ին Հայաստան-Ատրպէյճան հակամարտութեան պատճառով Թուրքիա փակած էր Հայաստանի իր սահմանադուռը: «Ինչպէս որ դուռը փակ երկու դրացիներ իրենց հարցերը չեն կրնար լուծել, Թուրքիա եւ Հայաստան ալ իրենց հարցերը չեն կրնար լուծել: Բայց եթէ դուները բանանք, խօսիլ սկսինք, յարաբերութիւն ստեղծենք՝ այն ժամանակ պիտի տեսնենք, թէ չունինք անլուծելի որեւէ հարց»:

Փայլան ըսաւ, որ 1993-ին Հայաստան խաղաղութեան ձեռք մեկնած էր, սակայն Թուրքիա այդ առիթը չկրցաւ օգտագործել: Ան յիշեցուց 2008-ի ֆուլթալոյսին դիւանագիտութիւնը: «Այդ ժամանակուան նախագահները՝ Ապտուլլահ Կիլի եւ Սերժ

Արեւմտեան Թեմի Հոգեւորականաց Ընդհանուր Ժողովը



Սոյն թուականի Հոկտեմբեր 4-ին Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Արմէն Համբար սրահում տեղի ունեցաւ Թեմի Հոգեւորականաց տարեկան Գ. Ընդհանուր Ժողովը, նախագահութեամբ Առաջնորդ Գերաշնորհ Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ մասնակցութեամբ աւելի քան 35 հոգեւոր հայրերի եւ հիւրաբար Արեւմտեան Թեմում գտնուող Գերաշնորհ Ս. Դանիէլ Եպս. Ֆինդիկեանի: Ժողովին բացակայ էին շուրջ 7 հոգեւորական մասնաւոր պատճառներով:

Ժողովը բացուեց հոգեւոր արարողութեամբ, որից յետոյ, մէկ րոպէ լուսնեմբ ժողովականները յարգեցին Ատրպէյճանի սանձագերծաց ազրեսիայի հետեւանքով գոհուած զինծառայողներին յիշատակը: Մինչ Առաջնորդ Սրբազանի գեկոյցը, բացման խօսքով հանդէս եկաւ Հոգեւոր Ս. Տաճատ Մ. Վ. Եարտմեանը եւ այնուհետեւ հրահրեց Սրբազան Հօրը, ներկայացնելու իր գեկոյցը: Գերաշնորհ Ս. Յովնան Արք. Տէրտէրեանն ամփոփ անդրադարձաւ իր ժամանակացոյցին, Մաշտոցի օգտագործմանը, մասնաւոր արարողակարգերի, ներկայացրեց Թեմի նոր եկեղեցականներին եւ քահանայից թեկնածուներին, ինչպէս նաեւ Թեմի եկեղեցական նոր կալուածների եւ շինարարութիւնների, Երուսաղէմ եւ Հայաստան ուխտագնացութիւնների կազմակերպման մասին: Մասնաւոր կերպով անդրադարձաւ Հայաստանի ներկայ կացութեանը եւ տեղեկացրեց, որ գոհուած զինծառայողների ընտանիքներին աջակցելու նպատակով նիւթական յատկացումներ պիտի տրամադրուեն: Նուիրատուութիւնները զինծառայողների ընտանիքներին փոխանցելու համար Հոգեւոր Ս. Սասուն Մ. Վ. Ձմրուխտեանը արդէն մեկնել է Հայաստան: Այնուհետեւ, Սրբազան Հայրն իր խօսքի մէջ նշեց նաեւ, որ մեր առջեւ ծառայած մարտահրաւէրները պիտի տոկանք յաղթարեւել միայն հաւատքի զիտակցութեամբ եւ զօրութեամբ, բայց առաւել նախանձախնդրութեամբ կատարելու մեր հովուական պարտականութիւնները: Պէտք է ամէն օր գերազանցեմք մեր հոգեւոր կոչման մէջ եւ ծառայութեան ճանապարհին լինենք մրցակիցներ Աստուծոյ փառքի համար, ի խնդիր Մայր Սուրբ Եկեղեցու համար: Սրբազան Հօր գեկոյցից յետոյ հրահրուեց ներկաներին մասնակցելու հիւրասիրութեան: Կարճ դադարից յետոյ ժողովականները շարունակեցին օրակարգով նախատեսուած բանախօսութիւնները: Զեկոյցներով հանդէս եկան Գերաշնորհ Ս. Դանիէլ Եպս. Ֆինդիկեանը «Աղօթք եւ Սուրբ Հաղորդութիւն», Հոգեւոր Ս. Տաճատ Մ. Վ. Եարտմեանը «Եկեղեցին Կաթոթէ», Արժանապատիւ Ս. Եղիշէ Քհնյ. Քսաչիքեանը «Աստուծոյ Խօսքը, որ կեանք է, ներկայ է Եկեղեցու ծիսական աղօթքի կեանքի մէջ» եւ Ս. Աւետիս Քհնյ. Աբովեանը «Մարդոց Սրբութիւնը Եկեղեցու աղօթքի էական նպատակն է եւ առաքելութիւնը» թեմաներով: Զեկոյցներին առնչուած քննարկումներ ծաւալուեցին, եղան բազմաթիւ առաջարկութիւններ ու նախաձեռնութիւններ: Հոգեւորականաց ընդհանուր ժողովին իր աշխատանքն աւարտեց Սրբազան Հայրերի ամփոփիչ խօսքով եւ աղօթքով:

Պոլսահայ «Մարալ» Համոյթի Ելոյթները Պուկարիոյ Մէջ



Պուկարահայ «Արաքս» հիմնադրամին ընդառաջելով Պոլսոյ էսպան Սանուց Միութեան «Մարալ» երգի-պարի համոյթը Հոկտեմբերի 16-ին ելոյթով մը հանդէս պիտի գայ Պուկարիոյ «Փլովտիվ» քաղքի «Պուրիս Խրիսթով» կեդրոնին մէջ: 45 հոգիներէ բաղկացած «Մարալ» համոյթի գլխաւոր մենակատարն է շնորհալի երգչուհի Մարալ Այվազը: Գեղարուեստական ղեկավարն է Կարպիս Չափքան:

Հարկէ նշել որ ամառուան շրջանին մարայիցիները լուրջ եւ յարատեւ փորձերով ու խանդավառութեամբ պատրաստուած էին այս ուղեւորութեան համար:

Իրաք - Հայ Ընտանիքի Մը 8 Անդամները Ողբերգական Արկածի Զոհ

«Արեւելք» լրատու գործակալութեան կ'իմանանք թէ Իրաքեան Գիւրտիտանէն ողբերգական արկածի զոհ գացած են հայ ընտանիքի մը 8 անդամները: Արկածը տեղի ունեցած է անցեալ Շաբաթ ուշ երեկոյցեան, երբ Պետրոսեան ընտանիքի 11 անդամները Ալ Ղոշ աւանէն որոշած էին վերադառնալ դէպի իրենց բնակավայրը՝ Սեմիր շրջան: Անոնց ինքնաշարժը բախած է մեծ բեռնակառքի մը, որուն հետեւանքով՝ վարորդը՝ Ստեփան Աշոտ Ապտ Պետրոսեանը, կինը Մէրին, հայրը Աշոտ, զաւակները Անելա, Արեւ, էլենա, Հայաստան եւ Միրօ մահացած են:



Ինքնաշարժին մէջ եղած են նաեւ նոյն ընտանիքի անդամ երեք այլ զաւակները, որոնք փոխադրուած են հիւանդանոց եւ կը գտնուին բժշկական խնամքի տակ (մէկուն վիճակը կը գնահատուի ծանր):

Նշենք որ ճամբան որ իրարու կը կապէ Իրաքեան Գիւրտիտանի Տիրք քաղաքի ծայրամասային Սեմեր շրջանն ու Ալ Ղոշ աւանը, լքուած վիճակ մը ունի եւ այդ պատճառով է որ ճամբան կոչուած է «Թաքիք ալ մոթ» («մահուան ճանապարհ»): Հանգուցեալներու յուղարկուելու թեման եւ թաղման արարողութիւնը կատարուած է Կիրակի օր Հայաստանեայց Առաքելական Ս. Ներսէս Շնորհալի եկեղեցոյ մէջ:

Պոլսոյ Պէզճեան Վարժարանի «Սիրոյ Սեղան»-ին Յաջող Զեռնարկը

Երկու տարիէ ի վեր համաճարակի պատճառով, դադրած պոլսահայ համայնքի «Սիրոյ Սեղան»-ները դարձեալ կեանքի կոչուեցան եւ դարձան համայնքային ապրումներու ժամադրավայրերը, մասնաւորաբար՝ դրամական հասոյթ ապահովելը շրջանի վարժարաններուն: Արդարեւ, անցեալ Կիրակի, Գոմ Գաբուրի Պէզճեան Ամիրա սրահը կը յորդէր խանդավառ բազմութեամբ, զրեթէ ազատ տեղ չկար սիրոյ սեղանին շուրջ: Բոլորն ալ եկած էին զօրավիզ կանգնելու Պէզճեան Մայր Վարժարանի կարիքներուն: Այս առթիւ ելոյթներ ունեցան տնօրէնուհի Տիկին Գլուխիա Ալթըբարմազ-Տէմիր եւ թաղային խորհուրդի ատենապետ Հրանդ Մոսկոֆեան, որոնք պարգեցին դպրոցի ներկայ իրավիճակը եւ շնորհակալութիւն յայտնեցին աջակցութեան համար:

Ունեցաւ որ պիւտճէի բացը հաւասարակշռուած էր, բարերարներու եւ ներկաներու ու յատկապէս Օրթագիւղի թաղական խորհուրդին կողմէ կատարուած նուիրատուութեան շնորհիւ: Հուսկ բանքն արտասանեց Պատրիարք Հայրը, յիշեցնելով որ Սիրոյ Սեղանն այն տեղն է ուր բոլորս կ'ապրինք մեր քրիստոնէական սէրը մեր եղբայրներուն նկատմամբ, մեր փոքր ու մեծ լուծմաները կը հանենք, սեղանին կը դնենք, ինչպէս որ մեր սեղանի ճաշերը կը բաժնենք, այնպէս ալ՝ մեր լուծմաները բերենք ընդհանուրին համար: Ուրախ ենք որ Մայր Եկեղեցոյ թաղականութիւնը հանգիստ կերպով պիտի շարունակէ ծառայել ու կանգուն պահել եկեղեցին ու Պէզճեան Մայր Վարժարանը ըստ պատրիարք հայրը:

Կ'իմանանք թէ վարժարանի ընդհանուր բացը կը հասնէր 4 միլիոն 500 հազար լիրայի: Նոյն օրը հանգանակուեցաւ 4 միլիոն լիրան: 2 միլիոն հանգանակուեցաւ «սիրոյ սեղան»ի ընթացքին եւ 2 միլիոն ալ նուիրաբերուեցաւ Օրթագիւղի թաղային խորհուրդին կողմէ: Հաւաքոյթն իր աւարտին հասաւ միաբերան երգուած Տէրունական Աղօթքով:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Իշխանութիւնն Ամէն Գնով Զպահելու Գինը

Շարունակուած էջ 2-էն

խագահներ հնարաւոր հանդիպմանը, նշել է, որ եթէ լինի նման առաջարկ (պաշտօնապէս նման առաջարկ չի հնչել), ապա, իր կարծիքով, վարչապետը կ'ընդունի հանդիպման առաջարկը:

Այժմ անդրադառնանք Լեւոն Տէր-Պետրոսեանի այն դիտարկմանը, թէ «Քոչարեանի նպատակն ամէն գնով Փաշինեանի իշխանութեան տապալումն է, իսկ Փաշինեանի նպատակը՝ ամէն գնով իր իշխանութեան պահպանումը»: Հնարաւոր չէ չհամաձայնել Առաջին նախագահի՝ Քոչարեանին վերաբերող դիտարկմանը. այո՛, վերջինիս նպատակն ամէն գնով ռեանշի հասնելն է, այլ հարց է, թէ որքանով է նրա այդ փափաքը տեղաւորուած քաղաքական պայքարի դասական կանոնների համատեքստում, կանոններ, որոնցով, ի դէպ, առաջնորդուած էր նաեւ Տէր-Պետրոսեանը՝ սկսած 2007 թուականից, երբ քաղաքական ախտորոշումներ էր տալիս գործող ռեժիմին՝ «վերից վար կոռոււմպացուած», «յանցագործ», «լիովին մաֆիոզ», ապա եւ առաջադրուած ՀՀ նախագահի թեկնածու՝ տապալելու թաթար-մոնղոլական խաների պէս երկիրը մէջ-մէջ արած կառավարիչներին՝ իշխանութիւնը վերցնելու նպատակով:

Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն էլ, այո՛, ամէն կերպ, եթէ կ'ուզէք, մարդկային կեանքերի գնով պահեցին իշխանութիւնն ու այդպէս պահած այն տարան, հասցրին մինչեւ 2018 թուականը՝ անտեսելով իր՝ Առաջին նախագահի մի քանի տասնեակ բարոյախրատական ելոյթներն ու պեսիմիստական վերլուծութիւնները երկրին սպառնացող արհաւիրքների ու աղէտների մասին: Ժողովրդից խլուած իշխանութիւնը Սերժ Սարգսեանին յաջողեց պահել նաեւ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանին «քաղաքական չարիք» անուանելու գնով, քանի որ վերջինիս հետ դաշնակցած Լեւոն Տէր-Պետրոսեանին այդպէս էլ չյաջողուեց կեանքի կոչել իշխանութեան տապալման մի այնպիսի յաւակնոտ ծրագիր, որը պատմութեանը յայտ-

նի է բուժուող անդրադառնական շտապուած յեղափոխութիւն անուամբ:

Ինչեւէ, անցեալը թողնենք անցեալում ու գանք մեր օրեր, անդրադառնանք Առաջին նախագահի կշտամբանքի երկրորդ հասցեատիրոջը՝ Նիկոլ Փաշինեանին, որը, ըստ նրա, ամէն գնով փորձում է պահել իշխանութիւնը: Այդ իշխանութիւնը, ինչպէս ընդդիմադիր գործիչներից մէկն է սիրում կրկնել՝ «Փաշինեանն իր հօր տնից» չի բերել, որ ուզած ժամանակ յանձնի կամ նուիրի, այլ ստացել է դրա միակ տիրոջից՝ Ժողովրդից, հետեւապէս պարտաւոր է պահել իրեն վստահուած իշխանութիւնը, ընդ որում՝ որքան հնարաւոր է՝ պինդ: Այսինքն՝ սահմանադրական բոլոր միջոցներով: Նոյնքան պինդ, որքան, ի դէպ, Լեւոն Տէր-Պետրոսեանը պահեց ժամանակին, երբ հայ Ժողովրդին 30 տարի առաջ կրկին պատուհասել էր պատերազմը, երկրում անառողջ մթնոլորտ էր, ընդդիմութիւնն օրհասի ժամին նորից փողոց էր դուրս եկել, հայրենիքը կորցնելու մասին էր հերթական անգամ գոչում ու «Լեւոն, հեռացիր» գոչում՝ պահանջելով վերջինիս «անյապաղ կամաւոր հրաժարականը»:

Ինչպէս վարուեց այդ ժամանակ Առաջին նախագահը, որքան յիշում ենք՝ հրաժարական չտուեց, այլ ամէն կերպ պահեց, պահպանեց 1 միլիոն 300 հազար մարդու իրեն վստահած իշխանութիւնը: Աւելին՝ իր «կամաւոր հրաժարականի» պահանջով նախագահական նստավայր եկած ընդդիմադիրներին մեղադրեց (առկայ է դա փաստող տեսագրութիւն) արկածախնդրութեան համար՝ յայտնելով, թէ դաւաճանած կը լինի իրեն ընտրողներին, եթէ մի քանի հազար հոգու պահանջով հրաժարական տայ՝ գնայ «դասալքութեան»:

Արդ, երբ Տէր-Պետրոսեանը խօսում է Փաշինեանի կողմից իշխանութիւնն ամէն գնով պահելու մասին, տպաւորութիւն է, թէ «մեղադրում է դաւաճանութեան եւ դասալքութեան չդիմելու համար»:

Եկել է իսկապէս հազարապատիկ լրջանալու պահը: «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Հայաստանի Առաջ «Միութեանական Պետութեան» Դիրքը

Շարունակուած էջ 2-էն

րանական ուղղութեամբ, եւ այդ խնդիրների համատեքստում էլ զգուճ թէ Ատրպայէյճանի, թէ դրա մեծ եղբօր՝ Թուրքիայի, թէ նաեւ Իրանի աջակցութեան կարիքը: Մինչդեռ, «միութեանական պետութիւնը» նշանակելու է յարաբերութեան որոշակի եւ սկզբունքորեն նոր ռեժիմ այդ եռեկէի հետ: Պատրաստ է Ռուսաստանը դրան: Այդ հարցը յամենայն դէպս ներկայումս «կախուած է օդում», հետեւաբար վերատիւն վերադառնում ենք հարցի, թէ որքանով է ներկայումս արդիական բարձրա-

ցուող օրակարգային հարցը, եւ որքանով է այն պարզապէս ներքաղաքական մաների հաշուարկ: Այն, որ հարցը էքզիստենցիալ առումով Հայաստանի մարտահրաւէրների շարքում է, չկայ կասկած: Սակայն, դրա ընթացիկ՝ կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ ռեժիմների ստոյգ գնահատումը չափազանց կարեւոր է մարտահրաւէրին հակադրելու քաղաքականութեան կազմակերպման եւ Հայաստանի հասարակական-քաղաքական, պետական օրգանիզմի անելիքների ծրագրման եւ համակարգման տեսանկիւնից:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Եթէ Մահն Անգամ Յոգնած Է

Շարունակուած էջ 11-էն

հեռու մնացած ժողովուրդներ ողջագուրուին: Պէտք է դռները բաց ըլլան: Էրզրումի եւ Երեւանի պարը նոյնն է, այս ժողովուրդները նոյն երգերով արցունք կը թափեն ու կը գուարճանան: Եթէ այս ժողովուրդները ողջագուրուին՝ այն ժամանակ պիտի տեսնէք որ իրարու ամենամօտիկ ժողովուրդներն են ասոնք: Կոչ կ'ուղղեմ էրտողանին ու Փաշինեանին՝ անյապաղ բանալ սահմանադուրը: Պր. Փաշինեան խաղաղութեան համար առիթ մըն է: Խաղաղութիւն ուզել կը նշանակէ ռիսք առնել: Փաշինեան կ'առնէ այդ ռիսքը: Փաշինեան խաղաղութեան ձեռք կը մեկնէ: Այսօր պիտի տեսնենք, թէ այդ ձեռքը կը սեղմեն, թէ ոչ: Պր. էրտողանէն կը խնդրեմ, որ սեղմէ Փաշինեանի երկարած ձեռքը»:

Ապա Փաշինեան ըսաւ, թէ պատասխանատուութիւն պէտք է ստանձնեն նաեւ երկու երկիրներու խորհրդարանները, մտաւորական-

ները, լրագրողները, առեւտրային ու տնտեսական կառույցները, ոչկառավարական կազմակերպութիւնները: Հոսկ ան շնորհակալութիւն յայտնեց երկու երկիրներու յատուկ ներկայացուցիչներուն՝ Սերտար Քըլըչի ու Ռուբէն Ռուբինեանի:

Փայլան մամուլը ասուլիսի աւարտին պատասխանելով իրեն ուղղուած հարցումներուն, հաստատեց, թէ ժողովուրդները նախապաշարում ունին իրարու նկատմամբ՝ անցեալի ցաւերու, կորուստներու պատճառով: «Այս ցաւերու հետ առերեսուելու համար պէտք է խօսիլ, յարաբերութիւն հաստատել», ըսաւ պատգամաւորը: Ըստ իրեն, երեք երկիրներու ազգայնականները կոմնակից չեն խաղաղութեան՝ իրենց իշխանութիւնները շարունակելու համար, սակայն երեք երկիրներու մէջ ալ կան մարդիկ, որոնք խաղաղութիւն կ'ուզեն, որոնց մասին չ'ելլեր: «Կոչ կ'ուղղեմ, որպէսզի խաղաղասէրներու ձայները աւելի բարձր ըլլան», եզրափակեց իր ելոյթը Կարօ Փայլան:



75th Anniversary

Of the Founding of St. Gregory Armenian Apostolic Church of Pasadena Under the Auspices Of the Primate of the Western Diocese of the Armenian Church His Eminence Abp. Hovnan Derderian


On Saturday, October 22, 2022 at Geragos Hall 7:00 p.m. Dinner & Program

Mortgage Burning Ceremony Bestowing of St. Nerses Medal to Marguerite Hougasian Special Program and Much More

75 ԱՄԵԿԱ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻ ԶԱՅՏ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՏԻՈՅ - ՓԱՍՏԵՆԱ

*Երեկոյթի ընթացքին պիտի կատարուի եկեղեցույս պարտամուրհակները այրելու արարողութիւնը *Սուրբ Ներսէս Ընդհալի Ծբանշանի տուչութիւնը Մարգրիտ Ղուկասեանին



For Reservations Please call

Lisa Meymarian (626)622-5462 / Yn. Talin Petoyan (626)616-1535 Church office (626)449-1523

Donation \$75

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.
Name:
Address:
City: State: Zip Code:
Country:
Tel:
Email:

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



Հանգուցեալ էՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆԻ Ծնեալ՝ (1963-2021) Մահուան Ա. Տարեկից

Հանգուցեալ իրաւաբան էՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առթիւ, Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան, Գործադիր Յանձնախումբի եւ բոլոր յարակից Յանձնախումբերու կողմէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, Հոկտեմբեր 16, 2022, կէսօրէ ետք ժամը 2ին, Oakwood գերեզմանատան մէջ

Address: 22601 Lassen St, Chatsworth, CA 91311:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՂԱՄԲԱՆԱԿԱՆ՝ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան ատենապետ, գաղափարի նուիրեալ եւ հաւատաւոր մշակ՝ հոգեհարազատ մեր անդամին իրաւաբան էտիվին Մինասեանի անժամանակ մեկնումով, Պոլսահայ Միութիւնը կորսնցուց միութեան խոր եւ աներեր համոզումներու տէր, առաքինի երախտաւոր մը, որ երեսուն երկար տարիներ ինքնամատուց եւ անմնացորդ կերպով ծառայեց ի խնդիր Միութեան շահերուն:

Միայն ծագումով հայ մը չեղաւ իրաւաբան Մինասեան, այլեւ իր կեանքով, մշակը հանդիսացաւ հայկական իր ժառանգութեան: Եղաւ մանաւանդ հաւասարապէս ե՛ւ հայ, ե՛ւ ամերիկացի:

«Ամերիկահայ» ու կրկնակ պատկանելութեան իր այդ կազմաւորումով ու համադրութեամբ, բնաւ անտարբեր չգտնուեցաւ աշխարհի ճակատագրին նկատմամբ, մօտէն հետեւեցաւ եւ դիրքորոշուեցաւ քաղաքական մեծ վերիվայրումներուն նկատմամբ ու նուաճեց արժանաւոր քաղաքացիի իր մնայուն տեղը 21-րդ դարու ամերիկեան իրականութեան մէջ անընկճելի կամքով, անսասան հաւատքով, անսպառ կորովով, մշտանորոգ յոյսով եւ ապագայի նկատմամբ անուցած իր վարդապոյն երազներով կարողացաւ գործել հայապայել ընդունակութեամբ, բարձր գիտակցութեամբ եւ արժանաւորութեամբ ձեռք առնելով պատասխանատուութեան խոշոր բաժին:

Ան բացառիկ գիտակցութեամբ մը, բացառիկ համոզումով լծուած էր միութենական աշխատանքին:

Նիւթակնանցած այս դարուն մէջ անցեալէն մինչեւ այսօր գաղթաշխարհի ամբողջ տարածքին, հայութեան ծառայող, հայութիւնը ներկայացնելու պատրաստութիւնը կը պարտինք իրաւաբան Մինասեանի թափած քրտինքին ու աշխատանքին:

Ան «մինչեւ շունչ վերջին» մնաց հաւատարիմ իր ուխտին, մնաց աւանդապահ իր տեսլականին ու մեկնեցաւ այս աշխարհէն, երբ տակաւին պարտականութեան վրայ էր:

Կեանքը ապրեցաւ իր սիրելի Պոլսահայ Միութեան արժէքի սկզբունքին կապուած ըլլալով իր գոյութեան բոլոր թելերով:

Քալեց այնպէս որ հետք թողուց Միութեան պատմութեան մէջ: Չեղաւ լուսանցքի վրայ, այլ՝ միշտ քալեց Մայր պողոտայէն բարձրահայեաց եւ սրտապինդ:

Ան թէ՛ եւ Պոլսահայ Միութեան հիմնադիրներէն չէր, սակայն հայ ժողովուրդին իր տուածով ու կերտածով՝ արժանի է հիմնադիրներու շարքին դասուելու: Իր անունը հազար պարի:

Ստացուած Հրատարակութիւններ

Շնորհակալութեամբ ստացանք «Ռ.Ա.Կ.ի անխնջ խմբագրապետը՝ Նուպար Պէրպէրեան» գիրքը: Հատորը կը պարունակէ Տօքթ. Նուպար Պէրպէրեանի ազգային, հասարակական, սփիւռքահայ մամուլ, գիտական, մշակութային, քաղաքական եւ եկեղեցական նիւթերու խմբագրական յօդուածներու եւ հաւաքածոներու համադրումը: Թէքեան Մշակութային Միութեան կողմէ հրատարակուած է Նիւ ձըրզիի մէջ 2022 թուականին:

Գիրքը կը բաղկանայ 500 էջերէ, նախաբանը գրած են Երուանդ Ազատեան եւ Յակոբ Վարդիվառեան:

Շնորհակալութեամբ ստացանք վերապատուելի վահան Թութիկեանի նոր հրատարակած Անգլերէն լեզուով Հայ Աւետարանական Հիմնադրութեան 75-անեակին նուիրուած 256 էջերէ բաղկացած լաթակազմ գիրքը: Հրատարակուած է Armenian Evangelical World Council-ի կողմէ 2020 թուին:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԻՐԱՒԱԲԱՆ ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆԻ

Ծնած եւ հասակ առած էր Պոլսոյ մէջ 1963ին:

Վերջերս ան ստացած էր Գիտական Աստիճանի իր ուսումը Ելեւմտական եւ Առուտուրի Գործարքի Կառավարման մարզին մէջ, Հարաւային Գալիֆորնիայի Համալսարանէն 1987ին եւ իրաւաբանութեան ԴՈԿՏՈՐԻ ԱՍՏԻՃԱՆ Լոյոլա իրաւաբանական Դպրոցէն 1990ին եւ նոյն տարին ընդունուած էր Գալիֆորնիա նահանգի իրաւաբաններու կազմուածքը: Ան նաեւ ընդունուած էր կիրառելու Միացեալ Նահանգներու Գերագոյն Ատենին դիմաց:

Տարիներ շարունակ ան ծառայած էր բազմաթիւ յանձնախումբերու, ներառեալ պետական յարաբերութիւնները, օրինական հարցեր, պաշտօնական կանոններու համակարգը, Առաջնորդին բարեկամները Արեւմտեան Թեմին:

Ատենապետն էր Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան 2010 թուականէն ի վեր: Ան երկու ժամկէտերու նախկին Ատենապետ եղած էր Հայ իրաւաբանական Կաճառին: Պրն. Մինասեան նաեւ Հայ իրաւական Կեդրոնի Արդարադատութեան եւ Մարդկային իրաւունքներու Տնօրէններու Խորհուրդի անդամ էր (ALC):

Նաեւ, Համահայկական Խորհուրդի անդամ՝ Արեւմտեան Ամերիկայի: Ան Ազգային եւ Միջազգային Ուսումնասիրութիւններու Վարչական Անդամ էր Հայ Կեդրոնին, նաեւ պատահական սիւնակագիր: «Ակօս» շաբաթաթերթի, Պոլսոյ մէջ:

Եղած էր նաեւ նախկին անդամ՝ «Արարատ Տան» Հոգաբարձութեան,

Լոս Անձէլըսի մէջ:

Ստացած էր Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Գերագոյն Պատրիարք՝ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ.ի ձեռամբ:

ՌԱԿ-ի ԱՆԽՈՆՁ Խմբագրապետը

Շարունակուած էջ 12-էն

անունի համար եւ ո՛չ տիտղոսի համար, նոյնիսկ բանաստեղծութեանց իշխան Վահան Թէքէեանի անունին համար չէ որ հաստատեցին ԹՄՄ, ինչպէս մինչեւ այսօր բոլորս կը կարծենք եւ կ'ընդունինք, այլ հայ մշակոյթի եւ անոր անարատ տարածման ի խնդիր իր բազմերես վտակներով զովացած ու գործնապէս յառաջընթաց:

Այդ կերպ է որ այսօր ԹՄՄ ազգին հպարտութեան ու գուրգուրանքին առարկայ կը դառնայ, անուններէ վեր, ճոխացած մեծ բանաստեղծի յիշատակովն ու անանցանելի հայ մշակոյթի լայնատարած արտայայտութեամբ: Իր հանգիստն քիչ առաջ թերեւս Պէրպէրեան նկատեց Միութեան որոշ թերութիւնները եւ թերեւս նոյնիսկ իր հատու նայուածքով դիտել տուաւ իր ընկերներուն, որոնք միշտ ի մտի կ'ունենան այս բացառիկ խմբագրականը:

Նմուշները կ'երկարին ու նիւթերը կը բազմապատկուին որոնց մէջ կը փայլի հայկական կենսունակ գիծը, ներկուսակցական, հաւաքական, եւ եկեղեցական, ու կը ծլարձակուին բազմաշնորհ կացութիւններ, մանաւանդ օրական չափանիշով գրուած խմբագրականներու իրենց հանգամանքով: Տարբերոյթ կացութիւնները անպայման չեն քննադատուիր անոնց մէջ, այլ կը գնահատուին իր անմիջական իմաստով, ուղիղ եւ ուղղակի,

ինչպէս հեղինակը ինք կ'ըսէ, միշտ չափանիշներ նկատի ունենալով:

Այլ խմբագրականներով գաղութներու կեանքն ու նկարագիրը բացայայտ կը դառնան, եւ անպայման ուսուցողական իրենց դերը կը կատարեն որքան ատեն որ Պէրպէրեան ջանացած է միշտ լաւատես մնալ չկորսնցնելով հանդերձ իրատեսութիւնը՝ յատկապէս Ամերիկահայ գաղութէն ներս: Պարզ խօսքով ընթերցողը կը հետեւի հեղինակի մտքին ու ժպիտին, երկուքն ալ ծանրակշիռ:

Ինչպէս միշտ այս հատորին մէջ եւս սպրդած են վրիպումներ, ինչպէս Մոնթրէալի պարագային «Մոնթեպելլօ» գրուած է, եւ ասորի հոգեւորականի մասին «ասոր» գրուած է: Կը պատահի: Բովանդակալից, բառին իսկական առումով, սոյն հատորը ուսուցողական է եթէ հանդարտ ընթերցուի, շնորհիւ նիւթերու այլազանութեան եւ այժմէականութեան, նոյնպէս նաեւ որպէս հայ լեզուի բարձրագոյն դասագիրք մեզի տրուած ոչ անցեալի պատմութենէն այլ ներկայի հայ իրականութենէն:

Շնորհաւորելի են հատորին հրատարակիչներն ու գործակիցները կատարուած գնահատելի աշխատանքին համար: Թելադրելի է խմբագրականներէն ոմանք անգլերէնի թարգմանել եւ քաջալերել երիտասարդութիւնը մեր մօտիկ անցեալի դիպուածները ծանօթացնելով նաեւ անոնց:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more... Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

Եւրո-2024. Հայաստանն ու Թուրքիան՝ Նոյն Խումբին Մէջ



Գերմանիոյ Ֆրանկֆուրտ քաղաքին մէջ տեղի ունեցաւ ֆուտբոլի 2024թ. Եւրոպայի առաջնութեան խմբային փուլի վիճակահանութիւնը: Հայաստանի հաւաքականը ընդգրկուեցաւ D խումբին մէջ եւ պիտի մրցի Խորուաթիայի, Ուելսի (Կալէս), Թուրքիայի եւ Լատվիայի հաւաքականներու հետ:

Եւրո-2024

- A խումբ. Սպանիա, Սկոտլանդ, Նորվեգիա, Վրաստան, Կիպրոս:
 - B խումբ. Հոլանտա, Ֆրանսա, Իռլանտա, Յունաստան, Ճիբրալթար:
 - C խումբ. Իտալիա, Անգլիա, Ուելս, Հիւսիսային Մակեթոնիա, Մալթա:
 - D խումբ. Խորուաթիա, Ուելս, Հայաստան, Թուրքիա, Լատվիա:
 - E խումբ. Լեհաստան, Չեխիա, Ալբանիա, Ֆարերեան կղզիներ, Մոլդովա:
 - F խումբ. Պելճիքա, Աւստրիա, Շուէտ, Ատրպէյճան, Էսթոնիա:
 - G խումբ. Հունգարիա, Սերբիա, Մոնթենեգրո, Պուլիարիա, Լիտվիա:
 - H խումբ. Դանիա, Ֆինլանտա, Սլովենիա, Ղազախստան, Հիւսիսային Իռլանտա, Սան Մարինո:
 - I խումբ. Զուիցերլանդ, Իսրայէլ, Ռումինիա, Քրոատիա, Պելառուս:
 - J խումբ. Փորթուգալ, Պոնտիա-Հերցեգովինա, Իսլանտա, Լիքտենշտայն, Սլովակիա, Լիխտենշտայն:
- Չտուճի հանդիպումները տեղի կ'ունենան յաջորդ տարուան Մարտին Նոյեմբեր ամիսներուն:
- Խումբերուն մէջ առաջին եւ երկրորդ տեղերը գրաւող երկիրները պիտի նուաճեն Եւրո-2024-ի ուղեգիր: Մնացած երեք ուղեգիրը կը վիճարկեն Ազգերու լիգայի փուլ-օֆֆ-ի չորս մասնակիցները յաջորդ տարուան Յունիսին: Գերմանիոյ հաւաքականը, որպէս կազմակերպիչ, առանց պաշարի կը ստանայ մասնակցութեան իրաւունքը:
- Եզրափակիչ մրցաշարը Գերմանիոյ մէջ տեղի պիտի ունենայ 2024թ. Յունիսի 14-էն Յուլիս 14-ը:

«Արսենալ» Պարտութեան Մատնեց «Լիվերփուլը» Եւ Առաջատարն Է

Անգլիոյ առաջնութեան 10-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» Լոնտոնի մէջ ընդունեց փոխախօյեան «Լիվերփուլին» եւ յաղթեց 3:2 արդիւնքով:

Ախոյեան «Մանչեսթըր Սիթին» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Սաութհեմփթընի» եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

«Չելսին» սեփական դաշտին վրայ 3:0 արդիւնքով յաղթեց «Ուլվերհեմփթընին»:

9 խաղէն յետոյ «Արսենալ» 24 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 1 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն»: «Լիվերփուլ» (8 խաղ) 10-րդն է՝ 10 կէտ:

Ռոնալտոյի 700-րդ Կոլը Յաղթանակ Տուաւ «Մանչեսթըր Եւնայթըտին»

Անգլիոյ առաջնութեան 10-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եւնայթըտ» Եւնայթըտի մէջ մրցեցաւ «Էվերթընի» հետ եւ հասաւ յաղթանակի 2:1 արդիւնքով:

Փորթուգալացի ֆուտբոլիստ՝ 37-ամեայ յարձակող Կրիշտիանու Ռոնալտուի կոլը, անոր 700-րդն էր ակումբային արհեստավարժ ասպարէզի ընթացքին:

«Մանչեսթըր Եւնայթըտ» 8 խաղէն յետոյ 15 կէտով 5-րդն է, «Էվերթընը» 9 խաղի ընթացքին վաստակած է 10 կէտ եւ 12-րդն է:



«Նափոլին» Խնդիրներ Զունեցաւ Եւ Առաջինն Է

Իտալիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին «Նափոլին» հիւրընկալեց «Գրեմոնէզէին» եւ յաղթանակի հասաւ 4:1 արդիւնքով:

«Նափոլին» 23 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Աթալանթայէն»:

«Ինթեր» Յաղթեց. Միխայիլանը Դարձաւ Կոլային Փոխանցման Հեղինակ

Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան 9-րդ հանգրուանին «Ինթեր» մրցակիցի դաշտին վրայ խաղցաւ «Սասուոլո»-ի հետ: Միլանեան ակումբը յաջողեցաւ հանդիպման հաշիւը բացաւ առաջին խաղակէսի վերջինն ռուպէներուն:

60-րդ վայրկեանին «Սասուոլո» յաջողեցաւ հաւասարեցնել արդիւնքը: 75-րդ վայրկեանին «Ինթեր» կարողացաւ յաղթանակի հասնիլ երբ շոտլանդացի հեղինակ Միխայիլանը փոխանցումին էտին Ջեկոն նշանակեց իր երկրորդ կոլը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի նախկին աւագ Հենրիխ Միխայիլան «Ինթեր»-ի հիմնական կազմին մէջ չէր: Ան դաշտ մտաւ երկրորդ կէսի:

Այս յաղթանակէն յետոյ «Ինթեր» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 7-րդն է:



«Պարսելոնան» Ուժեղ Էր «Սելտայէն»

Սպանիոյ առաջնութեան 8-րդ հանգրուանին փոխախօյեան «Պարսելոնան» սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Սելտայի» հետ: Սպանացի Չավիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Միակ կոլը 17-րդ վայրկեանին նշանակեց 19-ամեայ սպանացի կիսապաշտպան Պետրին:

«Պարսելոնան» 22 կէտով առաջինն է: Նոյն քան կէտ ունի «Ռեալը», որ կոլերու տարբերութեամբ երկրորդն է: «Սելտան» 11-րդն է՝ 10 կէտ:

ՊՍԺ-ն Ոչ Ոքի Խաղցաւ Առանց Մեսիի

Ֆրանսայի առաջնութեան 10-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն հիւրընկալեց «Ռեյմսին» եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 0:0:

41-րդ վայրկեանին մրցավարի հետ վիճաբանութեան համար հեռացուեցաւ փարիզեան խումբի 36-ամեայ սպանացի պաշտպան Սերխիո Ռամոսը:

ՊՍԺ-ի 35-ամեայ արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին վնասուածքի պատճառով չմասնակցեցաւ այս խաղին:

ՊՍԺ-ն 26 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մարսելէն»:

«Պորուսիան» Վերջին Վայրկեաններուն Խուսափեցաւ Պարտութենէն «Պայրընի» Հետ Խաղին

Գերմանիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյեան «Պայրըն» Տորթմունդի մէջ խաղցաւ «Պորուսիայի» հետ եւ բաւարարուեցաւ 2:2 արդիւնքով:

«Պայրըն Միլնիխ» 16 կէտով երրորդն է: «Պորուսիան» նոյն քան կէտով չորրորդն է:

Ֆերստապենը Յաղթեց Գարոնի Կրանտ Փրին Եւ Ժամանակէն Առաջ Պահպանեց Աշխարհի Ախոյեանի Տիտղոսը

«Ֆորմուլա-1»-ի ինքնաշարժի մրցաշարքին Մաքս Ֆերստապեն յաղթեց ճաբոնի Կրանտ Փրին:

Ճաբոնական Կրանտ Փրիի 53 շրջաններէն յետոյ առաջինը եզրագծին հասաւ աշխարհի գործող ախոյեան, «Ռես Պուլ»-ի վարորդ Մաքս Ֆերստապենը: Երկրորդ տեղը «Ֆերարի»-էն Շարլ Լեկլերն է, իսկ եռեակը եզրափակեց «Ռես Պուլ»-ի երկրորդ ինքնաշարժը, որ կը վարեր Սերխիո ֆերնանդէսը: Աշխարհի 7 անգամ ախոյեան, «Մերսեդէս»-ի վարորդ Լիւսի Հեմլիթընը միայն 5-րդն է:

Ֆերստապեն այս յաղթանակէն յետոյ ժամանակէն շուտ պահպանեց աշխարհի ախոյեանի տիտղոսը:

